

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(10)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(10)

ԵՐԵՎԱՆ 2022

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ*

Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ.*, *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
Հարություն Մարության, *պ. գ. դ.*
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ.*, *պրոֆեսոր*
Հռիփսիմե Պիկիչյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*
Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*
Համո Սուքիասյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*)
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*)
Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ Բրիտանիա*)

ISSN 1829-0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արման Նալբանդյան

ՇԻԿԱՀՈՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 8

Կարեն Թոխաթյան

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ
ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ 18

Նժդեհ Երանյան, Համլետ Պետրոսյան

ՏՈՂԻ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 31

Варданесова Татьяна

КОЛЛЕКЦИЯ СРЕДНЕВЕКОВОГО СТЕКЛА
ИЗ РАСКОПОК Г. ТИГРАНАКЕРТ В АРЦАХЕ 41

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գոռ Ղազարյան

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ 1920 – 1921 ԹԹ. 46

Մայա Գրիգորյան

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ
20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 58

Միրանույշ Առաքելյան

ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ
«СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН
КАВКАЗА» (СМОМПК 1881-1915) ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԷՋԵՐՈՒՄ 68

Վանիկ Վիրաբյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ 1920 Թ.
ԱՊՐԻԼԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
ԳՈՐԾՈՂ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 77

Միհեր Քումունց

ՂՈՒԿԱՍ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ «ԴԱՎԻԹ ԲԵԿ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՂԱՓԱՆՑՈՑ»-Ի ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 93

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վեռա Բոյան
ՍՅՈՒՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ
(ԸՍՏ ԴՐԱՄԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԻ) 108

ԱՂԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լիլիա Ավանեսյան
ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ՆՄՈՒՇՆԵՐ
(19-ՐԴ–20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 118

Կարինե Բազեյան
ԱՐՑԱԽԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋ 129

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անուշ Սաֆարյան
ԱՐՑԱԽԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 138

Նարինե Շամամյան
ՌԱԶՄԱՊԱՐԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ
(ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ) 145

Արմինե Շահբազյան
ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՍՅՈՒՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԿԻՆՈԱՐՎԵՍՏՈՒՄ 155

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մեդա Գալստյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ 168

Համլետ Պետրոսյան
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ 183

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ 189

Կարինե Բազեյան
Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
bazeyan60@yandex.ru

ԱՐՑԱԽԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋ*

Հիմնաբառեր. Արցախ, Շուշի, ասեղնագործություն, վիշապագորգ, սրբիչ, զարդահամալիր, զարդանախշ:

Արցախի մշակութային ժառանգության հետաքրքիր ու հարուստ մաս է կազմում ասեղնագործությունը, որը, սակայն, դեռևս համակողմանի պատմազգագրական ու արվեստաբանական ուսումնասիրության չի ենթարկվել, չնայած դրան հպանցիկ անդրադարձել է հայկական գեղարվեստական գործվածքի լավագույն մասնագետներից մեկը՝ Սերիկ Դավթյանն իր աշխատություններում: (Դավթյան 1972: Դավթյան 1981) Վերջինս այն դիտարկել է Սյունիքի ասեղնագործական դպրոցի շրջանակներում՝ մասնավորապես կանգ առնելով արցախյան սրբիչների վրա, որոնք իրենց նյութով, կատարման տեխնիկայով ու գեղազարդման առանձնահատկություններով տարբերվում են հայկական մյուս դպրոցների ասեղնագործ սրբիչներից: Հեղինակի ուշադրությունից վրիպել են, սակայն, այլ բնույթի ու նշանակության բանվածքները, որոնք արցախցիների կենցաղի ու մշակույթի անբաժան մասն էին կազմում: Սույն հոդվածով փորձ է արվում ներկայացնել արցախյան ասեղնագործությունը՝ որպես ինքնուրույն նկարագիր ունեցող ու հայկական ասեղնագործական մշակույթում որոշակիորեն առանձնացող երևույթ:

Ասեղնագործության՝ որպես արցախցի կանանց սիրած զբաղմունքի մասին են վկայում բարբառում պահպանված մի քանի բառերը. անովի (որ բացատրվում է՝ ասեղնագործ, ասեղով գործած), ասղակար (ասեղով գործած, ձեռագործ), ծաղկավոր (վրան ծաղիկներ բանած կամ նախշած) և այլն (Աճառյան 1913): Հատկանշական է, որ Հ. Աճառյանը որպես արցախյան երևույթ է ներկայացնում նաև Արևելյան Հայաստանում 19-րդ դարում լայն տարածում ունեցող այն սովորույթը, որի համաձայն Ջատկի «Ավագ ուրբաթ առաւօտ՝ լուսածագին 7 հատիկ կար ասեղով կը կարեն իրարու զգեստի վրայ, իբրև չարէ պահպանուելու միջոց», որը հայտնի էր ուրբաթարօր կամ ուրբաթառու անունով (Աճառյան 1913, 872):

Ասեղնագործական արվեստը Արցախում հնագույն պատմություն ունի: Միջնադարյան հայ պատմագրության մեջ ասեղնագործության մասին ամբողջական տեղեկությունը վերաբերում է Արցախին, ինչը վկայում է այս տարածաշրջանում

* Ստացվել է 26.08. 2022թ., ուղարկվել է գրախոսման 02.09.2022թ., ընդունվել է տպագրության 18.11.2022թ.:

ասեղնագործական արվեստի հինավուրց ու հարուստ ավանդույթի մասին: Խոսքը վերաբերում է 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցուն, որը հիացմունքով է պատմում Հաթերքի իշխանուհի Արզու խաթունի և նրա դուստրերի ձեռքի աշխատանքների մասին, որակելով դրանք որպես «…իմաստություն ոստայնանկութեան և հանճար նկարակերտութեան»: Գետիկի եկեղեցու համար նրանց պատրաստած վարագույրը պատմիչը նկարագրում է այսպես. «Զարմանալի տեսողաց, ի մազոյ այծիցն կակղագունից, ներկեալ պէսպէս և զանազան, գործք քանդակակերպ և նկարեալ պատկերօք, ճշտագոյն հանուածքովք, տնօրինականօք Փրկչին և այլ սրբոց, որ հիացուցաներ զտեսնողսն»: 1191–1214 թթ. նրանք խորանի վարագույրներ են պատրաստել նաև Հաղբատի, Մակարավանքի և Դադիվանքի համար: Գանձակեցին հիշատակում է մեկ այլ իշխանուհու՝ Ներքին Խաչենի տեր Վախթանկի տիկնոջ՝ Խորիշահի մասին ևս, որն ամուսնու մահից հետո, 1216 թ. «…չոգաւ յԵրուսաղեմ երկրորդ անգամ, բոլոր ունեցածը կարօտելոց բաշխեց, և ինք իւր ձեռագործով ապրեցաւ միշտ…» (Գանձակեցի 1961, 215–216):

Արցախի մելիքական դասի կանանց շնորհիվ հայ ազնվական տիկնանց բնորոշ գեղարվեստի ավանդույթները պահպանվեցին մինչև 19-րդ դարի վերջ, որի մասին Ե.Լալայանը գրում է. «Սրանք (իմա. մելիքների կանայք–Կ.Բ.) մի քանի աղախին և ծծմայր ունեին և տան կառավարությամբ չէին զբաղվում, միայն մետաքսից թեշիկով թել էին մանում, ասեղնագործում, քսակ և այլ ձեռագործեր շինում» (Լալայան 1899, 258):

Եկեղեցուն ասեղնագործ իրեր նվիրելու ավանդույթը, ինչպես նշվեց, Արցախի մելիքների կանանց կողմից շարունակվել է նաև հետագայում, որոնց օրինակները գտնվում են Մայր Աթոռի Գանձատանը: Դրանցից մեկը եպիսկոպոսական խույր է, որն ունի ընդարձակ նվիրատվական թվակիր հիշատակարան «Յիշատակ է թագս ի Մելիք Բեգլարի կողակից Մարիամեայ ի դուռն Հոռեկա վանքի. ՌՄԽԴ» (նկ. 1): 1795 թվականին ասեղնագործված այս նվիրատվության հեղինակ Մարիամը Մելիք Շահնազար 2-րդի՝ Վարանդայի ազդեցիկ մելիքի դուստրն էր (Պողոսյան 2011, 55):

Այս առումով կարևոր է հիշատակել ևս մեկ պատմամշակութային արժեք.՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գանձատանը պահվող 1771 թ. Ագուլիսում ստեղծված մետաքսե վարագույրը, որտեղ պատկերված է Աստվածամոր թագադրման տեսարանը (նկ. 2): Աստվածամոր աջ և ահյակ կողմերի ձվաձև շրջանակներում ասեղնագործված է հայատառ ընդարձակ հիշատակարան «Յիշատակ է Ագուլեցի Սիմիոնի կողակից Անթառամին և Ոսկանի կողակից Հռիփսիմեին, որդոյն Մեհրապին, քեռն Գայիեանին կողակցոյն Եղեսաբեթին, որդոյն Գրիգորին, դստերն Հերիքնազին .... Նորին Պետրոսին ի Դռն Գողթնեաց ՍԲ Թովմայի Առաքելոյն թուին հայոց ՌՄԻԵ» (Պողոսյան, 2011, 57–58): Ընդհանուր առմամբ, այս երկու ասեղնագործությունների գեղազարդման մանրամասներում առկա են ոճական ու տեխնոլոգիական միևնույն հատկանիշները, իսկ վարագույրի Ագուլիսում կատարված լինելն էլ կարևոր է մի քանի առումներով: Նախ՝ հայտնի են Արցախ-Սյունիք ու Գողթան գավառ տարածաշրջանների պատմամշակութային համալիրների սերտ աղերսները, և երկրորդ՝ ագուլեցիների մի ստվար զանգված այդ ժամանակներից ի վեր հաստատվել էր Արցախում ու մասնավորապես Շուշիում:

18-րդ դարին վերաբերող հարթակար ասեղնագործության այս երկու նմուշները մեզ հնարավորություն են տալիս որոշակի պարզաբանումներ կատարել 17–18-րդ դարերին վերաբերող ու նույն տեխնոլոգիայով արված ծածկոցների մի յուրահատուկ խմբի ծագումնաբանական հարցերի ասպարեզում: Խոսքը վերաբերում է «կովկասյան ասեղնագործություն» ընդհանրացված անունով տարբերակված պատի ասեղնագործ զարդերի այն խմբին, որը բնորոշվում է արցախ-սյունիքյան վիշապագորգերի գեղազարդման համակարգերի մանրամասներով, ու մասնագետների մի մասի կարծիքով, դրանք կատարվել են Արցախում (Պողոսյան 2011): Դրանց բազմաթիվ օրինակներ կան աշխարհի տարբեր թանգարաններում: Քանի որ դրանց ծագման վայրը նշված է հարավային Կովկաս, Ադրբեջանի մասնագետները, վերագրելով իրենց, այդ աշխատանքները ներկայացրել են որպես ադրբեջանական ասեղնագործության նմուշներ՝ հրատարակելով դրանց նվիրված մեծածավալ ուսումնասիրություն-ալբոմ (Silk Embroideries from Azerbaijan 2017):

Կովկասյան վիշապագորգերի ծագման ու տարածման ամենահավանական կենտրոնները հայ մասնագետները համարում են Արցախն ու Սյունիքը: (Պողոսյան 2004, 135): Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ ակնհայտ է դառնում, որ տարածաշրջանին բնորոշ վիշապագորգերի գեղազարդման համակարգի մանրամասներով հարդարված պատի զարդերն էլ ստեղծվել են այդ նույն տարածաշրջանում: Հարկ է նշել, որ գորգանախշ ասեղնագործությունների զարդահամալիրում լայն տեղ են գրավում ընդհանրապես գորգերին բնորոշ զարդանախշերն ու գունային համակարգը: Ընդ որում, այս դեպքում նույնպես չափազանց ակնառու են արցախ-սյունիքյան ավանդույթները: Այսպես, օրինակ, Մայր Աթոռի Գանձատան ասեղնագործ գորգիկը գեղազարդված է հանրահայտ «Լոռի-Փամբակ» տիպին բնորոշ խոշոր ծաղկախաչով (նկ. 3), իսկ Շուշիի գորգի թանգարանի (նկ. 4) ու Պատմության թանգարանի գորգանախշ բանվածքները կոնկրետ որևէ գորգի տիպի հետ ընդհանրություն չունենալով հանդերձ, հարդարված են դասական վիշապագորգերին բնորոշ տարբեր հորինվածքներով ու մանրամասներով (նկ. 5, 6):

Արցախի ասեղնագործության մեկ այլ հետաքրքիր խումբ են կազմում տոնածիսական նշանակություն ունեցող սրբիչները, որոնց կատարման տեխնիկայում, գեղազարդման ու գունային համալիրում դարձյալ ակնառու է Ագուլիսի ազդեցությունը: Կարծում ենք ագուլեցիներն են իրենց հետ բերել սրբիչների այդ տեսակը, որը հետագայում յուրացվել է արցախցիների ու մասնավորապես շուշեցիների կողմից: 18-րդ դարով թվագրվող այդ սրբիչներից մի քանիսի հեղինակները ծագումով շուշեցի են: Դրանցից ամենահայտնին, որը գտնվում է Ժողարվեստի թանգարանում (նկ. 7), Ս. Դավթյանը նկարագրում է այսպես. «Սրբիչի կտորը իր պահած շերամի թելով գործել ու ասեղնագործել է շուշեցի Լուսիկ (Լուսնթագ) անունով մի աղջիկ, որը հարս է գնացել Նուխի քաղաքը» (Ս. Դավթյան 1981, 67): Սակայն սրբիչների ամենահարուստ հավաքածուն՝ թե՛ քանակով, թե՛ գեղազարդման տարբերակներով, Հայաստանի պատմության թանգարանինն է (նկ. 8, 9):

Արցախի սրբիչներն ունեն մի շարք առանձնահատկություններ, որով տարբերվում են այլ տարածաշրջանների սրբիչներից: Սրանք համեմատաբար հաստ բամբակյա գործվածքներ են, որոնք ասեղնագործված են բազմագույն մետաքսաթելերով, թելքաշով ու համրովի հարթակարով, սրբիչի ողջ մակերեսը ծածկող կե-

նաց ծառերի պատկերներով, որոնք ուղեկցվում են զույգ թռչնանախշերով, ռոմբաձևերով և այլ պատկերներով: Արցախյան սրբիչներն առանձնանում են նաև նրանով, որ ի տարբերություն հայկական մյուս սրբիչների, որոնք միայն նեղ եզրերում են ասեղնագործված, սրանք եզրազարդված են նաև գործվածքի ողջ երկարությամբ, ինչով ամբողջանում է զարդահորինվածքը:

Ասեղնագործ զարդանախշերով հարդարվում էր նաև ավանդական տարազը, մասնավորապես վերնախավի տոնական տարազը: Այս առումով հանրահայտ են Շուշիի հայուհիների վերնազգեստն ու գոտին, որոնք բնորոշվում էին հարթակարով արված ոսկեթել ու մետաքսաթել ասեղնագործություններով (Ավագյան 1983, 45), ինչպես նաև գլխի հարդարանքի մաս կազմող երեսանոցը, որի երկարությամբ ոսկեթել ասեղնագործությամբ կտոր էր ամրացվում: (Լալայան,1900, 240)

Արցախում ասեղնագործական արվեստի զարգացումն ու լայն տարածումը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին կապված է Շուշիի՝ որպես քաղաքի ձևավորման հետ: Շուշիում, որը շատ կարճ ժամանակում դարձավ Արևելյան Հայաստանի ամենահայտնի «ամառանոցային» քաղաքը, մեծ էր ծագումով արցախցի թիֆլիսաբնակների մշակութային ազդեցությունը: Ինչպես վկայում է Ստ.Լիսիցյանը, «…երկհարկանի, երբեմն նաև եռահարկ քաղաքային տները, հովեկների զգեստները, …ինչպես նաև՝ գեղարվեստական ճաշակն ու զվարճալի ժամանցները չէին կարող չհեղափոխել ոչ միայն «բերդիե, այլ նաև շրջակա մոտիկ գյուղերի արտաքին կեցվածքն ու կենցաղը» (Լիսիցյան 1981, 30): Այդպիսով, 19-րդ դ. վերջից քաղաքային նոր տիպի բնակարանների ներսույթը, ի տարբերություն ավանդական-գյուղականի, առաջ բերեց ասեղնագործ և ժանյակե զանազան իրերի պահանջ՝ որպես ժամանակի նորաձևության արտահայտություն: Բնակարան մուտք գործած եվրոպական տիպի կահույքի հետ սենյակների գեղազարդմանն էին ուղղված բազմաթիվ ծածկոցներն ու տակդիրները, վարագույրներն ու սփռոցները, բարձերն ու թիկնաբարձերը և շատ ու շատ այլ իրեր, որոնք արտահայտում էին նաև տանտիրուհու կամ ընտանիքի կանանց ու աղջիկների ճաշակը, վարպետությունն ու, որ պակաս կարևոր չէ, նաև սոցիալական դրությունը:

Շուշիի ասեղնագործության զարգացմանն ու լայն տարածմանը նպաստող գործոն էր նաև օժիտի ինստիտուտը, որն, ընդհանուր առմամբ, բնորոշ էր ողջ Հայաստանին: Հայոց մեջ հատուկ վերաբերմունք կար կանանց ձեռարվեստի նկատմամբ, հայ կինը պարտավոր էր տիրապետել կարուձևին, հյուսելուն, ասեղնագործելուն, քանի որ «Կնոջ գործն է գլխաւորապես տնային հիմնական առարկաների և առօրեայ պիտոյքների պատրաստութիւնը» (Թառաեան 1898, 50): Հայ կնոջ, աղջկա պատիվն էր սեփական ձեռքերով օժիտի պատրաստումը, ուստի դեռ մանուկ հասակից հայ օրիորդը սկսում էր սովորել ձեռագործի տարբեր տեսակներին ու դրանց նրբություններին: Գյուղերում աղջիկները վարպետության դասեր էին առնում կամ հարազատներից, կամ գյուղում հայտնի կանանցից: Քաղաքներում այդ բացը լրացվում էր դպրոցական կրթության միջոցով:

19-րդ դարի երկրորդ կեսից ասեղնագործության ուսուցումն իրականացվում էր հատուկ այդ նպատակով հրատարակված Եղիսաբեթ Պատկանյանի, Խ.Թախտաջյանի, շուշեցի հայտնի ասեղնագործուհի Մարգարիտ Ալեքսանյանի ուսումնական ձեռնարկներով: Ընդ որում, դա իրականացվում էր ոչ միայն Շուշիում, այլ նաև

Արցախի խոշոր բնակավայրերում եղած տեղական դպրոցներում: Այս ձեռարվեստի մեջ հմտացող աղջիկները, ասեղնակարերը յուրացնելուց հետո, սովորում էին տարբեր նախշեր գործել, որի արդյունքում ստացվում էին բազմազան զարդանկարներով յուրատեսակ ասեղնագործության «օրինակներ», որոնց պատկերները հետագայում օգտագործում էին իրենց բանվածքներում: Ագուլիսում գործված նման օրինակի մի նմուշ պահպանվում է Պատմության թանգարանում (նկ.10): Քանի որ վերը նշվեց Արցախի մշակույթի վրա Ագուլիսի ազդեցության մասին, ուստի կարելի է վստահաբար ասել, որ նման աշխատանքներ, որոնք վկայում են ասեղնագործության զարգացման բարձր մակարդակը, կարող էին լինել նաև այլ բնակավայրերում:

Հայտնի է, օրինակ, որ 1880-ական թթ. ասեղնագործությունը ուսուցվում էր Արցախի Ջրաբերդ գավառի Կարաչինար գյուղի դպրոցում: Անշուշտ, մասնագիտական նրբությունների առումով այն ավելի զարգացած էր Արցախի կենտրոն Շուշիում, ուր 19-րդ դարի վերջին ու հաջորդ դարի սկզբին հայտնի ասեղնագործուհիների համբավ ունեին Զարուհի Մախմուրյանը, Ոսկի Թունիբեկյանցը, նշանավոր ոսկերիչ ու մանրանկարիչ Գրիգոր Բաղամյանցի քույր Շուշանիկը, որի 1906 թ. հարթակարով արված աշխատանքներից մեկը՝ արծվի պատկերով պատի զարդը, պահվում է Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանում (նկ.10) (Պողոսյան 2011, 54):

Շուշիում ասեղնագործության զարգացումը խթանեցին 1864 թ. քաղաքում բացված Սբ. Մարիամ իգական և Ղարաբաղի թեմական դպրոցները: Այս գործում ուշագրավ է շուշեցի Մարիամ Հախումյանի կատարած աշխատանքը, որի կազմած ծրագրով և գործադրած ջանքերի շնորհիվ բացվեց «Սուրբ տիրամայր Մարիամու» օրիորդաց դպրոցը, որտեղ հատուկ ուշադրություն էր դարձվում նաև աղջիկների ձեռագործի դասավանդմանը: Ասեղնագործության ուսուցման բարձր մակարդակի վկայությունն է այն փաստը, որ հիշյալ ուսումնական հաստատությունների բյուջեի համալրման աղբյուրներից մեկը կազմում էր սովորողների ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառքից հավաքված գումարը: Այս մասին մանրամասն և խիստ արժեքավոր տեղեկություններ են տալիս «Տարազ» ամսագիրը (Տարազ 1891, 63) և «Գործ» հանդեսը (Ավագյան 1989, 96 – 97):

Հանդեսում մասնավորապես ներկայացվել են օրիորդաց դպրոցի հաջողությունները, ուր 1880 – 1881 թթ. աշակերտների թիվը հասել է 149-ի: «Գործն» անդրադարձել է ոչ միայն ուսուցման ձևերին ու մեթոդներին, ուսուցանվող առարկաներին, որոնց թվում հատուկ տեղ է գրավել «շնորհալի աղջիկների ձեռագործների ցուցահանդեսները», ինչպես նաև հատուկ մրցանակագրերի և վարժապետական կոչումների հանձնումը: Հանդեսում թվարկված են այն առաջադեմ աշակերտուհիները, որոնք օրինակելի վարք են ցուցաբերել և հետագայում զբաղվել մանկավարժությամբ, որոնց թվում են Վարսենիկ Գյանջեցյանը, Մարիամ Բահաթրյանը, Ոսկի Թավրիզյանը, Բալախանում Առաքելյանը, Կատարինե Դոլուխանյանը և ուրիշներ:

Շուշիում ասեղնագործության զարգացմանը նպաստում էր նաև տեղի կուսանոցը, որի միանձնուհիների ձեռքի աշխատանքներն իրենց կարատեսակներով և գեղարվեստական վարպետությամբ մեծապես ազդում էին շրջապատի վրա: Թե որքան կարևոր է եղել կույսերի ձեռարվեստը, վկայում է այն փաստը, որ նրանց ասեղնագործ աշխատանքների վաճառքից ստացված գումարով է կառուց-

վել մենաստանի Սբ.Աստվածածնի եկեղեցին: Այդ մասին հիշատակություն է թողնվել շինության հարավային դռան ճակատակալ քարի վիմագիր արձանագրության մեջ, որը վերաշարադրել է Մ.Բարխուդարյանը. «Շինեցաւ սուրբ եկեղեցիս յանուն Սուրբ Աստուածածնայ արդեամբ ձեռագործ աշխատանաց Կոյս Հռիփսիմեայ օժանդակութեամբ երից եղբարց իւրոց հարազատաց Իսրայէլի, Աստուածատրոյ և Պետրոսի Գրիգորեանք Բահադուրեանց ի թվն 1816 ամին: Միևնոյն բազմաշխատ Կոյս Հռիփսիմէն շինել տուած է զանգատունը առանց օժանդակութեան այլոց:» (Բարխուդարեանց 1895, 148):

Միանձնուհիները միաժամանակ ասեղնագործություն էին դասավանդում տներում, ինչը վկայում է Լեոն (Լեո 1914): Նրանց ջանքերով Շուշիի ասեղնագործ բանվածքներն աչքի են ընկնում բարձր որակով ու արտահայտչականությամբ:

Արցախի ասեղնագործական դպրոցում առավել տարածում ունեցող կարատեսակներն էին հարթակարն իր տարատեսակներով (լիցք, համրովի, ոսկեթել), շղթայակարը, ցողունակարն ու թելքաշը: 20-րդ դարի սկզբներից գործածվում է նաև օղակար-պատկարը, որը եվրոպական նորաձևության արդյունք էր և համանման էր մյուս քաղաքների նույնատիպ բանվածքներին: Մելիքական դասի կանանց ձեռագործները մեծավմասամբ կատարվում էին ոսկեթելով, փայլուններով, մարգարտանման ուլունքներով՝ թանկարժեք կտորների վրա: Սրանք հաճախ ունենում էին անվանատառեր և վենզելներ, որոնք ներկայացնում էին նրանց ազնվական ծագումը: Ասեղնագործության համար կիրառվում էին հիմնականում տեղական մետաքսյա և բամբակյա բազմագույն ու սպիտակ թելեր: Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, համեմատաբար հարուստ խավի աշխատանքներում գերակշռում են թանկարժեք ոսկեթել-արծաթաթել, մետաքսաթել, ուլունքազարդ և այլ նյութերի կիրառմամբ հարուստ ասեղնագործությունները: Եթե մինչև 19-րդ դարի վերջերը կիրառական էին տեղական արտադրության մետաքսաթելերը, որոնք պատրաստվում էին տնայնագործական եղանակներով և նույն ձևով էլ ներկվում, ապա 20-րդ դարից լայն տարածում են ստանում պատրաստի՝ դրսից ներմուծված «իրիս», «գարոգ», «մուլինե» և այլ նոր տեսակի թելերը, որոնք մեծ քանակությամբ վաճառվում էին խանութներում:

Ինչպես արդեն նշվեց, Արցախի ասեղնագործությունները գերազանցապես բնակարանի ներսույթը զարդարելուն ուղղված բազմազան իրեր են (ծածկոցներ, վարագույրներ, բարձեր, թիկնաբարձեր, սփռոցներ, սրբիչներ և այլն):

Արցախյան ասեղնագործության զարդահամալիրն աչքի է ընկնում բուսական զարդանախշերի գերակայությամբ, որոնք ներկայացված են ինչպես ոճավորված, այնպես էլ ճշգրիտ վերարտադրված ձևերով:

Այլ խումբ են կազմում քաղաքային տիպի ասեղնագործությունները, որոնց զարդահամալիրներում, բացի զուտ արցախյան բնորոշ զարդանախշերից լայնորեն ներկայացված են համահայկական նախշեր և հորինվածքներ, որոնց կարելի է հանդիպել նաև նույն ժամանակաշրջանի այլ քաղաքների ասեղնագործության մեջ: Դրանք իրենց վրա կրում են ռուսական, եվրոպական ազդեցություն, քանի որ արվում էին վերը հիշատակված հանդեսներում և ամսագրերում տպագրված նախշերի հիման վրա: Քաղաքային կենցաղում նոր երևույթ էին նաև զուտ դեկորատիվ բնույթ ունեցող սյուժետային ու դիմանկարային ասեղնագործությունները,

որոնք գործածվում էին պատերը զարդարելու համար: Դրանք, որպես գեղանկարչական տիպի աշխատանքներ, ներկայացնում էին ինչպես ազգային նշանավոր դեմքերին, այնպես էլ ուղղակի որևէ աբստրակտ հերոս կամ հերոսուհի, որոնք պատկերվում էին որոշակի միջավայրում:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պետք է նշել, որ մի շարք ընդհանրություններ դրսևորելով հայկական ասեղնագործության հետ, արցախյան ասեղնագործությունը, սակայն, ունի զուտ իրեն բնորոշ, տեղական պատմամշակութային միջավայրով պայմանավորված հատկանիշներ: Հիմք ընդունելով Արցախում պատրաստված եկեղեցական բանվածքները, գորգանախշ ասեղնագործ ծածկոցները, կենաց ծառերի պատկերներով սրբիչները, ոսկեթելի կիրառության տեղական ձևերը, կարող ենք ասել, որ արցախյան ասեղնագործությունն առանձնանում է հայոց ասեղնագործական մշակույթում, ներկայանալով որպես ինքնուրույն, պատմականորեն ձևավորված ավանդույթներով աչքի ընկնող ժողովրդական արվեստի տեսակ: Ըստ այդմ Արցախի ասեղնագործությունը պետք է դիտարկել կամ որպես հայկական ասեղնագործության առանձին դպրոց, կամ ներկայացնել Սյունիքի հետ միասին՝ հաշվի առնելով դրանցում առկա ընդհանրությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՃԱՌՅԱՆ 1913 – Աճառյան Հ., Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:

ԱՎԱԳՅԱՆ 1983 – Ավագյան Ն., Հայկական ժողովրդական տարազը, Երևան, 1983:

ԱՎԱԳՅԱՆ 1989 – Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն, Երևան, 1989:

ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ 1895 – Բարխուտարեանց Մակար եպիս., Արցախ, Բագու, 1895:

ԳԱՆՁԱԿԵՑԻ 1961 – Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց (աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանյանի), Երևան, 1961:

ԴԱՎԹՅԱՆ 1972 – Դավթյան Ս., Հայկական ասեղնագործություն, Երևան, 1972:

ԴԱՎԹՅԱՆ 1981 – Դավթյան Ս., Դրվագներ հայկական դեկորատիվ-կիրառական արվեստի պատմության, Երևան, 1981:

ԹԱՌԱԵԱՆ 1898 – Թառաեան Ա., Հայ ժողովրդի արհեստագործութիւնը, «Ազգագրական հանդէս», Գիրք Գ., Թիֆլիս, 1898, էջ 3 – 71:

ԼԱԼԱՅԱՆ 1899 – Լալայան Ե., Գանձակի գավառ, «Ազգագրական հանդես», Գիրք Ե, Թիֆլիս, 1899, էջ 213 – 360:

ԼԱԼԱՅԱՆ 1990 – Լալայան Ե., Գանձակի գավառ, «Ազգագրական հանդես», Գիրք Զ, Թիֆլիս, 1900, էջ 231 – 382:

ԼԵՈ 1914 – Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Շուշի, 1914:

ԼԻՍԻՑՅԱՆ 1981 – Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), «Հայ ազգագրություն և բանահյուսություն», Պրակ 12, Երևան, 1981, էջ 9 – 84:

ՊՈՂՈՍՅԱՆ 2004 – Պողոսեան Ա., Վիշապագորգերի ծագումնաբանութեան ու տարածման արէալների հարցի շուրջ, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2004, թիվ 1 – 12, 367 – 414:

ՊՈՂՈՍՅԱՆ 2011 – Պողոսյան Ա., Հարթակարով ասեղնագործական մշակույթի ավանդույթների մասին, «Էջմիածին» ամսագիր, Ս. Էջմիածին, հուլիս 2011, էջ 53 – 60:

ՏԱՐԱԶ 1891 – Ղարաբաղի թեմական դպրոցի հաշիւը, «Տարազ», Թիֆլիս, 1891:

SILK EMBROIDERIES FROM AZERBAIJAN 2017 – The Stars of Caucasus: Silk Embroideries from Azerbaijan, HALI Publications, London, 2017.

Karine Bazeyan
Ph.D in History

Shirak Center for Armenological Studies of NAS RA
bazeyan60@yandex.ru

THE EMBROIDERY SCHOOL OF ARTSAKH

Keywords: Artsakh, Shushi, embroidery, vishapagorg (dragon carpet), towel, composition, ornament.

One of the most interesting and richest part of the cultural heritage of Artsakh is embroidery. However, it has not been completely examined by art critics. Though, Serik Davtyan, one of the best specialists in Armenian weaving, briefly touched on Artsakh embroidery in his works. The researcher was exploring the art of Artsakh embroidery within Syunik embroidery school, focusing particularly on Artsakh towels. They differ from the embroidered towels of other Armenian schools by their material, techniques, and decorative elements. However, the author did not notice the needlework of a different nature and significance, which were an integral part of the daily life and culture of the people of Artsakh. In regard especially to the rugs dating back to the 18th–19th centuries, the composition of which is formed by images typical of Artsakh dragon carpets. This article aims to present Artsakh embroidery as a phenomenon that has its description and stands out in the Armenian embroidery culture.

Карине Базеян
Кандидат исторических наук

Ширакский центр арменоведческих исследований НАН РА
bazeyan60@yandex.ru

АРЦАХСКАЯ ШКОЛА ВЫШИВКИ

Ключевые слова: Арцах, Шуши, вышивка, вишапогорг (ковер с драконовым орнаментом), полотенце, композиция, орнамент

Одной из самых интересных и содержательных составляющих культурного наследия Арцаха является вышивка. Ни с этнологического, ни с искусствоведческого аспектов она пока еще всесторонне не исследована. Тему арцахской вышивки в своих работах коснулась одна из лучших специалистов по художественному ткачеству С. Давтян. Исследователь рассматривала ее в рамках Сюникской школы вышивки, уделив при этом особое внимание арцахским полотенцам. Они отличаются от вышитых полотенец других армянских школ вышивки своим материалом, техникой исполнения и орнаментацией. Однако, автор не обратил внимание на вышитые другие изделия различного назначения, которые были неотъемлемой частью повседневной жизни и культуры армян Арцаха. Это, в частности, покрывала 18–19-ых веков, в вышивке которых использованы мотивы местных ковров, в частности, так называемых драконовых ковров. В данной статье мы попытались представить арцахскую вышивку как явление, имеющее собственные неповторимые черты и занимающее отдельное место в культуре армянской вышивки.

Կարինե Բազեյան

Արցախի ասեղնագործական դպրոցի շուրջ

Նկ. 1. Խոյր, 1795 թ., Արցախ, Սբ. Էջմիածնի «Ալեք և Մարի Մանուկյան» գանձապրոն

Նկ. 2. Վարագույր, 1771 թ., Ագուլիս, Սբ. Էջմիածնի «Ալեք և Մարի Մանուկյան» գանձապրոն

Նկ. 3. Ասեղնագործ գորգիկ, 18-րդ դար, Արցախ, Սբ. Էջմիածնի «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատուն

Նկ. 4. Ասեղնագործ գորգիկ, 18-րդ դար, գ. Շոշ, Արցախ, Վ. Ասծատրյանի հավաքածու (Շուշիի գորգի թանգարան)

Նկ. 5. Ասեղնագործ գորգ, 18-րդ դար, Արցախ, ՀՊԹ, Ա 686

Նկ. 6. Ասեղնագործ գորգ, 18-րդ դար, Արցախ, ՀՊԹ, Ա 687

Նկ. 7. Սրբիչ, 18-րդ դար, Շուշի, Արցախ
Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան

Նկ. 8. Սրբիչ, 18-րդ դար, Արցախ, ՀՊԹ, Ա 8410/3

Նկ. 9 Սրբիչ, 18-րդ դար, Արցախ, ՀՊԹ, Ա 266

Նկ. 10 Ասեղնագործության օրինակ, 19-րդ դար, Ագուլիս, ՀՊԹ, Ա 397